ՆՈՐ-ԴԱՐ

№ 52 ՏԱՍՆԵՒՈՒԹԵՐՈՐԴ ՏԱՐԻ Ուրբաթ, 23 Մարտի 1901 Ուրբաթ, 23 Մարտի ՏԱՍՆԵՒՈՒԹԵՐՈՐԴ ՏԱՐԻ № 52

Տարեկան 10 րուբլի, վեց ամիսը՝ 6 րուբլի, երեք ամիսը՝ 3 ր.50 կ., ամիսը՝ 1 ր., հատով 5 կ.։
Բաժանորդ գրւում են Թիֆլիսում միմիայն խմբագրատանը։

Խմբագրութեան հասցէն՝ Тифлисъ, Редакція „Норъ Даръ“
կամ Tiflis, Rédaction ,,Nor-Dar‘‘

Խմբագրութիւնը բաց է ամեն օր (բացի տօն օրերից) ժամը 9-ից մինչև 2-ը։ Յայտարարութիւններն ընդունւում են ամեն լեզուներով։ Յայտարարութիւնների բառին 2 կ., ռեկլամների համար կրկնապատիկ։

ԹԻՖԼԻՍԻ ԺՈՂՈՎԱՐԱՆ

Ուրբաթ, 1901 Թ. մարտի 23 ին, Գ. պ. անդամների, կանդիտատների և նրանց ընտանիքների համար

Ն. Ա. ԿԱԶԼՈՎ

Կտայ մի մեծ շքեղ Ներկայացում պատրանքի (իլլիզիա) և ֆանտաստիկ ցնորքների վերաբերմամբ

ՀՆԴԻԿՆԵՐԻ ԽՆՃՈՅՔ

(683) անունով։ 2—2

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Դպրոցական գործը պարսկահայոց մէջ։
Քրոնիկոն.— Լուրեր։
Մեզ գրում են.— Շամախուց։ Գորիսից։ Բագուից։ Զարգեարանից։
Տնօրհնէք։
Թղթակցութիւններ.— Գանձակից։ Նամակ Գերմանիայից, Մարբուրգ։
Քաղաքական.— Անգլիա։ Թիւրքիա։
Հեռագրական լուրեր։
Բանասիրական.— Գիտական շարժում։
Տեղեկատու։
Յայտարարութիւններ։

ԴՊՐՈՑԱԿԱՆ ԳՈՐԾԸ ՊԱՐՍԿԱՀԱՅՈՑ ՄԷՋ

«Նոր-Դար»ի ընթերցողներին յայտնի է, որ այս տարուայ մարտի 9-ին Թեհրանում պատգամաւորների ժողով պիտի լինէր, պարսկահայոց դպրոցների համար մի ծրագիր մշակելու և առհասարակ դպրոցական գործը կարգի և կանոնի տակ դնելու նպատակով։ Վերջին մի քանի տասնեակ տարիներումն է, որ հին խալիֆայական դպրոցները տեղի են տուել նոր մեթոդով դպրոցների, որոնք քիչ թէ շատ համապատասխանում են ժամանակակից պահանջներին։ Բայց ինչ որ ցաւալի է և ակնյայտնի, այդ այն է, որ այստեղ էլ դպրոցների մէջ կապ ու միութիւն չկայ։ Իւրաքանչիւր դպրոցի ուսուցիչը կամ ուսուցչական խումբը իւր ուղղութիւնը կամ խելքին փչածն է գործ դնում։ Չկայ մի ծրագիր, չկայ մի կանոնագրութիւն, որով ղեկավարուեն թէ ուսուցչական և թէ հոգաբարձական մարմինները, և ինչ որ աչքի է ընկնում ու մինչև անգամ աչքը ծակում, այդ այն է՝ որ ուսուցչութեան են հրաւիրւում այնպիսի անձեր, որոնք ոչ մի կանոնաւոր կրթութիւն չունին, կամ այս ու այն անկիւններումն են զարգացել և ի վերայ այսր ամենայնի ոչ մի վկայական չունին։ Պարսկահայոց մէջ չկայ մի այնպիսի հաստատութիւն, որն ուսուցիչներ տայ, այլ ուսուցիչները միշտ հրաւիրւում են Կովկասից և կամ գալիս են Թիւրքիայից։ Ցաւալի է այս հանգամանքը և ցաւալի է նրանով, որ իրենց կոչման անհամապատասխան անձեր ուսուցչութեան վարկն այնքան են գցել այս՝ առանց այն էլ կեղծաւոր ու խորամանկ միջավայրի մէջ, որ շատ տարիներ պիտի անցնին, մինչև որ ուսուցչին տրուի այն յարգը, որին իրաւամբ արժանի է նա։ Եղել են ուսուցիչներ և կան, որոնք շարունակ ինտրիգներով են պարապել, անբարեխիղճ են եղել և իրենց պարտաւորութեան սահմաններից դուրս գալով՝ շատ խռովութիւնների պատճառ են դարձել։ Երբ մարդ կարդում է Թաւրիզի Արամեան դպրոցի 1890,1891 և էլ առաջուայ տարիների ուսուցչական և հոգաբարձական ժողովների արձանագրութիւնները, ակամայ սարսռում է, թէ ինչ հրէշաւոր պարագիտներ են ներս սողոսկել այն սուրբ յարկի տակ, որի դռնապանը լինելու անգամ արժանի չեն եղել, թող թէ ուսուցիչ։ Որքան անպատուութիւն է ուսուցչի ծեծուելը, բայց այդ երևոյթը սովորական է այս երկրում։ Արտաբիլ, Մարաղա, Թաւրիզ, Սալմաստ վկայ են մեր ասածներին։ Եղել են և կան անհատներ, որոնք ոչ մի գործի ընդունակ չլինելով կամ անհաւատարիմ գտնուելով ուրիշ գործերի մէջ, միակ շահաւէտ աղբիւրն ուսուցչութիւնն են համարել և այստեղ ահա ակսել են իրենց խաչագողութիւնները, միշտ հարստահարելով մատաղ սերնդի ամենաթանկագին ժամերը և իրենց կրքերին ծառայեցնելով ուսումն ու կրթութիւնը, միանգամայն զզուեցրել են տգէտ ու միամիտ ժողովրդին։ Ե՞րբ պիտի վերջանայ այս բոլորը, երբ պիտի հասկանան մարդիկ, որ բարեկամութիւնն ու խնամութիւնը չպէտք է շփոթել այն գործերի հետ, որոնք մեր ապագայի լուրջ հիմունքները պիտի կազմեն։ Որոշ և հաստատուն ծրագիր չլինելով՝ շատ անգամ այնպիսի թիւրիմացութիւններ են պատահում, որ մարդ ակամայ յուսահատւում է. բազմաթիւ փաստեր ապացուցանում են, որ հոգաբարձական մարմիններն իրենց պարտաւորութեան սահմաններից դուրս, շատ անգամ միջամտելով ուսուցչական ժողովների զուտ մանկավարժական որոշումներին, շատ անախորժութիւնների պատճառ են դարձել։

Ապրելով թանձր և մութ գաղափարների ու հասկացողութիւնների մէջ, պարսկահայը կարծում է, թէ դպրոցը պիտի ծառայէ միայն իւր կրքերին ու խելքին, և նայում է դպրոցի վրայ իբր մի այնպիսի հաստատութեան, ուր մատաղ սերունդը միայն մի չոր ու ցամաք կրթութիւն պիտի առնէ. իսկ նրա ինչ փոյթն է, թէ դպրոցի գլխաւոր նպատակներից մէկն էլ հասարակութեան համար բարոյական և պիտանի անդամներ պատրաստելն է։

Միանգամայն և բացարձակապէս չկայ ընտանեկան դաստիարակութիւն (հազուագիւտ բացառութեամբ), ամեն ինչ հիմնուած է արտաքին խստութեան և կեղծաւոր ձևապաշտութեան վրայ։ Կարծում են և նոյն իսկ համոզուած, որ պատանիներին պէտք է պատժելով դաստիարակել. չըմբռնելով բարոյական հեղինակութեան բարերար ազդեցութիւնը, իրենք են, որ իրենց շրջապատող մթնոլորտից վարակուելով՝ դաստիարակում են իրենց երեխաներին այնպէս, որ դպրոցի գործը շատ են դժուարացնում։ Չկայ ոչ մի կապ ընտանիքի և դպրոցի միջև. բայց պէտք է յիշել, որ այս կողմից Թաւրիզի այժմեան դպրոցներն աշխատում են մի այդպիսի կապ հաստատել դպրոցի և հասարակութեան միջև։

Պարսկահայոց դպրոցական կեանքում այս և սրա նման ցաւալի երևոյթներ եղել են և դեռ կան, սակայն մենք հաւատում ենք, որ եթէ աչալուրջ և շրջահայեաց առաջնորդներ լինեն, շատ և շատ անհամութիւնների առաջը կարելի է առնել։

Այս օրերս Ռաշտի երկսեռ դպրոցների հոգաբարձութիւնն ստացել էր մի պաշտօնական գրութիւն Պարսկ. Հնդկաստանի առաջն. փոխանորդ Բագրատ վարդապետ Վարդազարեանից, որով արժանապատիւ հայրը պահանջում է տեղեկագրել իրեն Ռաշտի դպրոցների նիւթական և բարոյական կացութեան մասին, նաև ովքեր են ուսուցիչները և ինչ կրթութիւն ու վկայական ունին, ինչ ռոճիկ են ստանում, քանի տարի են ուսուցչութեան պաշտօն վարել և այլ այսպիսի կարևոր հարցեր։ Նման գրութիւններ ուղարկուած են նաև նոյն թեմի բոլոր դպրոցներին։ Մենք միանգամայն վստահ ենք, որ հայր սուրբը, եթէ այդպիսի արիութեամբ գործէ, նշանաւոր հետևանքների կարող է հասնել. Մենք սպասում ենք այնպիսի կանոնագրութեան, որով միանգամայն վերջ տրուէր այսպիսի ցաւալի երևոյթների, ինչպէս է դպրոցը մասնաւոր և անպաշտօն մարդկանց ու մարմինների ձեռքով կառավարելը՝ չճանաչելով հասարակութեան կողմից ընտրուած հոգաբարձուների՝ իբրև իւրաքանչիւր տեղի հայ ազգաբնակութեան ներկայացուցիչների իրաւասութիւնը և այլն։

Այս և սրա հետ կապ ունեցող խնդիրների մասին մի այլ անգամ դարձեալ առիթ կունենանք գրելու։

Սարգիս Անդրէասեան

Ռաշտ, 12 մարտի

ՔՐՈՆԻԿՈՆ

Ինչպէս հաղորդեցինք, Վեհափառ Կաթողիկոսը Բեսսարաբիա կմեկնի մայիսին։ Լսում ենք, որ Բեսսարաբիայից վերադառնալիս Նորին Օծութիւնը կըհաճի այցելել, ի միջի այլոց, Շամախի, որտեղից կգնայ դիտելու Սաղեանի վանքը և ապա Մէյսարի վանքը։ Վերջինս, որ երկրաշարժից աւերակ դրութեան մէջ է, Նորին Վեհափառութիւնը մտադիր է վերանորոգել տալու։

— Թիֆլիսի մսավաճառներն ընկերութիւն են կազմում միասին գործելու համար։ Այդ բանի համար նրանք կանոնադրութեան ծրագիր են մշակել։ Ընկերութեան իւրաքանչիւր անդամ պարտաւոր է վճարել իւր գնած իւրաքանչիւր խոշոր մացու կենդանու համար 20 և մանր կենդանու համար 10 կ. օրական։ Ընկերութիւնը կըսկսի գործել այն ժամանակ, երբ այդ վճարումներից հաւաքուի 3,000 ր.։ Փողերը հաւաքելու համար ընկերութիւնն իւր միջից ընտրում է 10 հոգի. Նոյն այդ տասն հոգուց 7 հոգին պէտք է զբաղուեն անասուններ գնելով, մնացած 3-ը պէտք է վարեն դրամական գործերը։ Դրանք ընտրւում են 1 տարի ժամանակով։ Մսագործներն այսպիսի միտք յղանալով՝ դիմել են Թիֆլիսի քաղաքագլխին, որի աջակցութիւնն են խնդրում իրենց ծրագրի իրագործման համար։

— «Նով. Օբ.»ին հեռագրում են, որ մարտի 21-ին, գիշերուայ ժամը 4-ին Երևանում երկրաշարժ է եղել երեք ցնցումներով, որոնցից առաջինն ամենից զօրեղ է եղել. ուղղութիւնն եղել է հարաւից հիւսիս։ Երկրաշարժը տևել է մօտ մի րոպէ։

— Կովկասի բժշկական կայսերական ընկերութեան մէջ ներկայումս ծրագիր է մշակւում սանատորիա հիմնելու թոքախտաւորների համար։ Այդ գործում մասնակցելու համար Կովկաս է գալիս Պետերբուրգի կլինիկական ինստիտուտի տեսուչ պ. Սկլիֆասովսկին։

— Գանձակի նահանգում մօրեխը կենդանացել է։ Այդ վնասակար միջատը ոչնչացնելու համար նահանգական վարչութիւնը խնդրում է յատկացնել 5,000 ր.։

— Մարտի 16 ին Պետերբուրգի համալսարանում համեմատական լեզուագիտութեան դոկտորի աստիճան է ստացել Մոսկուայի համալսարանի պրիւատ դոցենտ Լ. Մսերեանցը պաշտպանելով այդ առթիւ ներկայացրած դիսերտացիան։

— Մարտի 21-ին Թիֆլիսի դատարանական պալատում քննուեցաւ բագուեցի Թումայեանցի գործը։ Վերջինս մեղա-

---

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ԳԻՏԱԿԱՆ ՇԱՐԺՈՒՄ

Ջուրը վնասակար բակտերիաներից ազատելու միջոցներ։—Դարձեալ թոքախտի մասին։—Թոքախտաւորների երկու բուժարան՝ Բելգիայում և Ֆրանսիայում։—Ֆինզէնի լուսաբուժարանը և թոքախտ։

Նկատուած է, որ վարակիչ հիւանդութիւնների տարածման միջոցին մեծ դեր է խաղում ջուրը։ Երևի ամենքն էլ յիշելիս կլինին, թէ ինչպէս խոլերայի տարին հասարակութեանն զգուշացնում էին հում ջուր գործածելուց։ Շատերը չէին հասկանում դրա միտքը, կարծում էին, թէ ջուրն ինքն ըստ ինքեան, եթէ եռ տուած չէ, վնասակար է խոլերայի ժամանակ, մինչդեռ այդ խորհրդի միտքը պարզ էր՝—զանազան վարակիչ հիւանդութիւնների սաղմերը, բացիլներն ընկնելով գետնի վրայ՝ մտնում են ներս հողի մէջը և ստորերկրեայ ջրի հոսանքի հետ խառնուելով, կամ նոյն իսկ երկրի երեսին անձրևի ու ձիւնի ջրից քշուելով, թափւում են այն ջրի մէջ, որ մենք գործ ենք ածում։ Բնականաբար այն տեղերում, ուր ջուրը գալիս է անվնաս աղբիւրներից, օրինակ՝ լեռներից, ուր բնակութիւն չկայ, կարող չէ հիւանդութեան համար վնասաբեր լինել։ Բայց որովհետև այդպիսի մաքուր ջուր շատ քիչ է պատահում, մանաւանդ քաղաքներում, ուստի և զանազան հիւանդութիւնների սաղմերից ջուրը մաքրելու համար խորհուրդ է տրւում ջուրը եռացնել՝ ընդունելով՝ որ եռացրած ջրի մէջ այդ սաղմերը ոչընչանում են։

Անշուշտ իւրաքանչիւր ընտանիք կարող է իւր գործածութեան համար միշտ ջուրը եռ տուած գործածել, սակայն ամենքիս էլ հասկանալի են դրա անյարմարութիւնները։ Ուստի և մի կողմից ողջապահիկ գիտութեան մարդիկ, միւս կողմից ինժեներները մտածում են դիւրացնել գործը և ջուրը մատակարարել այնպէս, որ արդէն զտուած ստանայ հասարակութիւնը։

Այդ նպատակի համար բազմաթիւ միջոցներ կան առաջարկուած, որոնք կարելի է երկու խմբի բաժանել. մէկը՝ որ աշխատում են այնպէս անել, որ հիւանդութեանց սաղմերը չկարողանան ստորերկրեայ ջրի մէջ խառնուել, իսկ միւսը՝ աշխատում են ջրի միջից հեռացնել այդ սաղմերը, եթէ կան։ Բայց գլխաւորապէս երկրորդ եղանակն են գործածում։

Սակայն մինչև այժմ առաջարկուած բոլոր միջոցներն էլ դժուարութիւններ ունին, մանաւանդ եթէ հարկաւոր է մեծ քանակութեամբ ջուր մատակարարել, ինչպէս, օրինակ, մեծ քաղաքները։ Ջուրը կարելի է աւազի շերտերից անցկացնել, բայց դրանով ջրի յատկութիւնը լաւանում է, իսկ ցաւաբեր բացիլներից զերծ մնալու կատարեալ վստահութիւն կարելի չէ ունենալ։ Տաքացնելու եղանակն էլ շատ թանկ է նստում. Մնում է քիմիապէս մաքրելու եղանակը, որի մէջ գերազաս է ճանաչուած օզոնով մաքրելու ձևը։

Օզոնը գազ է և շատ նման թթուածնին, աւելի լաւ է ասել՝ թթուածնի ձևափոխութիւնն է, միայն մի առանձին հոտ ու համ ունի և աւելի շատ է լինում փոթորկից յետոյ, որովհետև նա կազմւում է թթուածնից՝ ելեքտրականութեան, կայծակի ներգործութիւնից։ Ջերմութեան ազդեցութիւնից օզոնը դառնում է թթուածին, որի միջոցին երկու չափ օզոնից առաջանում է երեք չափ թթուածին. սովորական ջերմութեան միջոցին նա շատ հեշտութեամբ միանում է շատ առարկաների հետ, այսինքն թթուեցնում է, և միևնոյն ժամանակ խիստ վնասակար է միկրոբների համար։

Վաղուց է գիտնականներն օզոնն առաջարկում են գործ դնել իբրև միջոց ջուրը վնասակար բակտերիաներից ազատելու համար, բայց գործնական փորձեր չէին լինում։ Առաջին անգամ այդ նպատակով պատրաստուած գործիքը երևան եկաւ 1895 թուին, Պարիզում, և մի ժամուայ մէջ տալիս էր երկու խորանարդ մետր զտած ջուր, սակայն այդ եղանակն ընդարձակ գործածութիւն չունեցաւ։ Անցեալ տարի միայն Լիլլ քաղաքում Մարմիէ և Աբրահամ ինժեներների առաջարկած եղանակով փորձեր արին մեծ քանակութեամբ ջուր զտելու և, ինչպէս յատուկ կազմուած քննիչ մասնաժողովի հաղորդած տեղեկութիւնից երևում է, փորձը շատ յաջող է անցել և ճանաչուած է մինչև այժմ եղած միջոցներից ամենաաջողը, մանաւանդ որ այդ նպատակի համար գործածուող գործիքներն էլ շատ պարզ կազմութիւն ունին, շատ պինդ են և կանոնաւոր գործում. բայց ցաւաբեր բակտերիաները ոչնչանում են, բացի բացիլուս սուբտիլիսից, որը սակայն բոլորովին անվնաս է համարւում թէ մարդկանց և թէ անասունների համար, մանաւանդ որ այդ բացիլը դիմադրում է նաև ջուր զտելու համար գործադրուող բոլոր միւս միջոցներին, նոյն իսկ 110° եռացմանը։ Պէտք է աւելացնել, որ ջուրն օզոնով զտելիս ջրի մէջ ոչ մի կողմնակի նիւթ չէ խառնւում, որ վնասակար լինէր մարմնակազմի համար. աւելացնենք, որ օզոնը, ինչպէս ասացինք, ոչ այլ ինչ է, եթէ ոչ թթուածին, դրա գործադրութիւնն այն առաւելութիւնն ունի, որ ջուրն աւելի լաւ է յագենում օդով, աւելի առողջարար ու հաճելի է դառնում խմելու համար՝ առանց սակայն իւր հանքային օգտակար բաղադրութիւններից զրկուելու։

Եռ տուած ջուրը, ինչպէս յայտնի է, անհամ է լինում, որովհետև ջրի մէջ եղած հանքային մասնիկները մեծ մասամբ նստում են ջրի տակը կամ մեզ համար անօգուտ կերպով կորչում։

⁂

Արդէն քանիցս առիթ եմ ունեցել մատնացոյց անելու, որ մարդկային ագրուած և յանցաւոր էր ճանաչուած փաստաբան Կարաբեգովի հետ կապած մի պայմանագրի ոչնչացման մէջ։ Կարաբեգովի պաշտպանը երդուեալ հաւատարմատար Գրուզենբերգն էր, իսկ մեղադրեալ Թումայեանցի պաշտպանը Պետերբուրգի յայտնի փաստաբան Կարաբչևսկին էր։ Դատարանական պալատը երկու կողմը լսելով, կարճ խորհրդակցութիւնից յետոյ, Խ. Թումայեանցին անմեղ հրատարակեց։ Նահանգական դատարանը Թումայեանցին զրկելով քաղաքացիական և մասնաւոր իրաւունքներից՝ Ռուսիայի հեռաւոր նահանգներում աքսորի էր դատապարտել։

— Վերջին անգամ Թիֆլիսի արքունական թատրոնում բեմ դուրս եկաւ Մայերբէյերի յայտնի «Սատանայ Ռոբերտ» օպերի մէջ Դիւկը Ռոբերտի դերում։ Իւր հսկայական և արտակարգ ձայնով արդէն յայտնի Դիւկն այդ երեկոյեան զարմացրեց հանդիսատեսներին. մանաւանդ վերջին գործողութեան վերջումը հիանալի էր նրա ձայնը և երգեց չափազանց լաւ և ջերմութեամբ։ Թիֆլիսի բեմի վրայ այդպիսի ձայն դեռ չէ լսուած։ Ցաւալի է, որ այդ երեկոյեան թատրոնը կիսով չափ դատարկ էր, որ ապացոյց է, թէ մեր Թիֆլիսի թատրոն յաճախող հասարակութիւնն ունի իւր կապրիզները, որոնք բնական լոգիկայով բացատրել չի լինում։ Ճշմարիտ է, կրիտիկա անելը դիւրին է, իսկ արհեստը դժուար, հետևաբար կարելի է ասել, որ Դիւկի ձայնը խիստ զօրեղ է, տեղ տեղ արդէն դադրած, ուրեմն չոր, որ նրա պիանոն թոյլ է և այլն և այլն,— բայց հօ նրա ձայնն առողջ ձայն է, զօրեղ է և հասնում է այն բարձր նոտերին, որոնց ոչ ոքի ձայնը չի հասնում, և միևնոյն ժամանակ նրա ձայնը մաքուր է մնում վերի տօն անցնելուց յետոյ իսկ և հնչում, թնդում է զօրեղապէս։ Երգելիս Դիւկի արտասանած ամեն մի բառը պարզ, կլասիքական է։ «Այիդայի», «Մարգարիտ», «Օտելլոյի» և նման օպերներում, որտեղ տենորից մեծ ձայն է պահանջւում, Դիւկն երգում է իւր մաքուր ձայնով. նա ո՛չ թէ խօսում կամ բղաւում է, ինչպէս որ այդ անում են միւս «տենորները»։ Դիւկին շատ ծափահարեցին և վերջումը շատ անգամ բեմ հրաւիրեցին։ Դիւկի հետ արժանաւորապէս երգեց և խաղաց տիկին Աստաֆիևան, որ իւր ձայնի հարստութեամբ և ոյժով ու իւր դերերի շնորհքով և բարեխղճութեամբ կատարումով առաջինն է այժմեան օպերի խմբի մէջ։

Այսօր, մարտի 23-ին, ներկայացնելու են «Համլէտ» օպերը Լուիզէ Տիտրացինիի մասնակցութեամբ։ Այդ ներկայացումով փակւում է ձմեռուայ սեզոնի օպերների ներկայացումը։

— «Վարշ. Դնևնիկ»-ը հաղորդում է, որ Հենրիկ Սենկևիչն սկսել է նիւթեր հաւաքել պատմական մի նոր վէպի համար, որի նիւթն առնուած կլինի XVII դարի կեանքից, իսկ գլխաւոր հերոսը կլինի լեհաց թագաւոր Եան Սոբեսկին։ Այդ վէպն սկզբում լոյս կտեսնի անգլիերէն լեզուով անգլիական պարբերական մի հրատարակութեան մէջ, որի խմբագրութիւնը լեհացի հռչակաւոր գրողին առաջարկել է մի շիլլինգ (մօտ 47 կոպ.) իւրաքանչիւր բառի կամ 3—4 ռուբլի իւրաքանչիւր տողի համար։

— Խմբագրութիւնս ստացաւ Իսահակ Յարութիւնեանցի մի նոր աշխատութիւնը՝ «Իմ օրագիրը» (արտատպուած «Լումայ» հանդէսից), Թիֆլիս, 1901 թ., էջ 48, գինը 25 կ.։

ՄԵԶ ԳՐՈՒՄ ԵՆ

ՇԱՄՇԽՈՒՑ.—Զատկից յետոյ սպասւում են այստեղ Բուդաղեանները, որոնք ներկայ կլինեն Մէյսարի գիւղի եկեղեցու օծմանը, որ, ինչպէս յայտնի է, շինւում է Ենովք Բուդաղեանի հաշուով։ Ամենայն հաւանականութեամբ եկեղեցու օծումը տեղի կունենայ ապրիլի 8-ին։

—Եղանակները կատարեալ գարնանային են. երկար ժամանակ է անձրևներ չեն եկել և այս հանգամանքն երկիւղ է ազդում գիւղացիներին։

ԳՈՐԻՍ.—Եղանակը փոխուեց. մարտի 19-ի երեկոյեան յորդառատ անձրև էր գալիս։ Ծառերը ծաղկել են, ծաղիկները բացուել և դաշտերը ծածկուել են դալար կանաչով։ Քաղաքիս հայոց 3 եկեղեցիներումն էլ երբեմն, երբեմն քարոզներ էին խօսում վրացերէն լեզուով. դժբաղդաբար, ինչպէս չինարէն լեզուն չգիտեմ, այնպէս էլ վրացերէնը. միայն այսքանը տեղեկացայ, որ մեր հոգևոր հայրերն աւելի շատ քարոզում են «զղջման և ապաշխարութեան» մասին և ամբոխին հրաւիրում են եկեղեցի յաճախել...

ԲԱԳՈՒԻՑ.—Մարտի 18-ին, երեկոյեան ժամի 8-ին, Վարանցովսկայա փողոցում «Ֆանտազիա» բաղնիսի մօտ Քարքանջ գիւղացի (Շամախու գաւ.) մի երիտասարդ գրպանից հանեց ատրճանակը և հինգ անգամ արձակեց շուշեցի հայ զինուոր Խանջարեանի վրայ։ Գնդակներից երեքը վիրաւորեցին զինուորի թևը, իսկ երկուսը վրիպեցին։ Վիրաւորուածին տարան անմիջապէս Միքայէլեան հիւանդանոց, իսկ չարագործին՝ ոստիկանատուն։ Ոճրի պատճառը յայտնի չէ դեռ։

ԶԱՐԳԵԱՐԱՆ գիւղից (Շամախու գաւ.).—Անցեալ շաբաթ մեր գիւղը մի կատաղած գայլ մտաւ և յարձակուեց մի քանի շների վրայ։ Գիւղացիները հազիւ կարողացան մի կերպ փախցնել գիւղից այդ կատաղած կենդանուն և վիրաւորուած շներին սպանեցին։ Կատաղած գայլը դուրս գնալով մեր գիւղից, մտնում է Թիրջան թրքաբնակ գիւղը, իրեն պատահող երեք գիւղացու վրայ յարձակւում և նրանցից մէկին տեղն ու տեղը պատառում է, իսկ միւս երկուսին կիսամեռ դրութեան մէջ թողնում ու փախչում։ Վիրաւորուածների աղաղակների վրայ գիւղացիք գալիս են և մեռածին թաղում, իսկ վիրաւորուածներին Շամախի տանում ուղղակի։ Գաւառապետի կարգադրութեամբ, վիրաւորուած այդ երկու հոգուն փոխադրեցին Թիֆլիս՝ Միքայէլեան հիւանդանոց։

ՏՆՕՐՀՆԷՔ

(Վերջ*)

ժե) Որովհետև ծխերս տները յաճախ փոխում են, ուստի հարցնում ենք—այս մօտերքումն էլ տուն կա՞յ թէ ոչ։ Մի քանիսն ասում են՝ չկայ, միւսն ասում է՝ կայ. ի վերջոյ յայտնւում է, որ այս-ինչ դռան աղքատի տունն է։ Մէկը մինչև անգամ միամտաբար հարց է տալիս, թէ «այն էլ պիտի օրհնէք», որից պիտի հասկանալ այն՝ որ այդ աղքատը մեզ վարձատրելու համար դրամ չունի. Մըտնում ենք ներս։ Տէր Աստուած, մարդս որքան քչով կարողանում է ապրել և որքան մեծ հարստութիւն դիզելուց յետոյ դարձեալ աչքը չի կշտանում։ Ի՛սկ որ լաւ նկատեց մէկը, թէ «այն էլ պիտի օրհնէք». հազիւ թէ տան նման է։ Ներսը կանգնած է տան հայրը մի հիւանդ երեխայ գրկած, որի վրայի ձորձից օրական մի քանիսը կարելի է գտնել աղբանոցներում։ Բացի այդ, զարմացած մեզ վրայ են նայում չորս հինգ աղջիկներ մի մի լաթի կտոր ուսները քաշած, որոնց բրդբրուած ու բաժան-բաժան եղած ծայրերը հազիւ թէ ծածկում են ծնկները. դրանցից աւելի բաղդաւորները շալից, գուլպից ունին հագած մի-մի ոտին. իսկ ամենից մեծի գլխին կայ մի հնամաշ թաշկինակ։ Մայրը տանը չէ. երևի ուրիշների տներում գործ կատարելու է գնացել։ Նայում ես, տան ներսը ոչ անկողին է երևում, ոչ չոր, ոչ մի փալաս, ոչ նստելու աթոռ և ոչ մի որ և է կարասի։ Սենեակի մէջ տեղը դրուած է մի ոտը պոկուած թիթեղեայ մաշուած վառարան, որը ծակծկուած խողովակներով միացած է պատի հետ։ Ծուխը խեղդելու չափ ծանր է, բայց ցրտի պատճառով դուռը յետ է դրուած։ Տան մի անկիւնում իրար վրայ անկարգ թափուած են փողոցներից հաւաքուած չոփեր, տաշեղներ, փայտ ու ամեն բան՝ ինչ որ կարելի է այրել։ Մի ջարդուած կաթսայ, մի գուլայ, մի քանի քրեղան ու փայտեայ գդալներ, մի ճրագ և մի քանի խասիր ու կապերտներ—ահա այդ տան ամբողջ զարդարանքը։ Տունն օրհնում ենք. տանտէրն այնքան աղքատ է, որ ամենևին չի էլ նեղանում մեզ վարձատրելու համար։ Երկչոտ երեխաներին կանչում ենք, աւետարանը համբուրել տալիս, մի յիսուն կոպէկ էլ դնում անբաղդ հօր ձեռքում և հեռանում ծանր տպաւորութեան տակ։

ժզ) Այս մէկ տունն օրհնելն այնքան դժուար է թւում մեզ, որ երբ յաջողւում է օրհնել ու պրծնել, դուրս գալու ժամանակ այնպէս ազատ շունչ ենք քաշում, որպէս թէ մի սարի ծանրութեան տակից լինինք փրկուելիս։

Ահա թէ ինչ է պատճառը։

Այս տան տիրոջը մենք պատահում ենք փողոցում, սովորական բարևը տալիս ենք իրար ու անցնում մեր գործին։ Երբ դրա տունն օրհնելու հերթն է գալիս, գնում ենք և այնտեղ։ Հարևանների երեխայքը յայտնում են, որ տանտիկինը տանն է։ Դուռը հրում ենք, չի բացւում։ Երեխաներից մէկը քաղաքավարութեամբ մօտ է գալիս և դուռը չկարողանալով բանալ՝ բարձրաձայն «տեօտեա» է կանչում ու բաղխում դուռը։ Բայց ճարպիկ «տեօտեան» իւր գործը լաւ գիտէ. նա քնած չէր, երբ մենք մօտենում էինք իրենց տանը։ Այսքանը հաստատ գիտենք, որ նա բացակայ չէ տանից, որովհետև երեխան երդուելով հաստատում է, թէ այս րոպէիս այստեղ դրան առաջ կանգնած էր, և մինչև անգամ չի էլ կարծում, որ նա մեզ տեսած չի լինի։

Յետ ենք դառնում։ Փողոցում դարձեալ պատահում ենք այդ տանտէր պարոնին. յայտնում ենք՝ որ տուն գնացինք, բայց դուռը փակուած էր։ Նա չփոթուած, անվստահ և փոքր ինչ անբնական ձայնով յայտնում է, թէ «մերոնք Թիֆլիս են գնացել». և աւելի լաւ հաստատելու համար յարակցում է, թէ տասն օր կլինի, որ այնտեղ են և թէ մի քանի օրից յետոյ սպասում է նրանց։ Ի՞նչ կարող ենք ասել. Թողնում ու հեռանում ենք, իսկ նա յաղթանակով դիմում է դէպի տուն, որից հազիւ հարիւր քայլ հեռացած ենք։ Պատահել են դէպքեր, երբ մենք սեպհական աչքով տեսել ենք նրան իրենց պատշգամբում կանգնած, բայց երբ գնացել ենք, նորից դուռը փակ ենք գտել։ Նրա մօտիկ ընկերներն այդպիսի հրաշքի բացատրութիւնն այսպէս են տուել, որ նա մահճակալի տակ է եղել մտած։ Կէս ժամից յետոյ, երբ փողոցում երևացել է նոյն պարոնը դէպի մեզ գալիս, գնդակահարի նման, բոլշէաբար շուռ է տուել երեսը և գնացել դէպի այն կողմը, որտեղ ամենևին գործ չի ունեցել։

Ճշմարտութեան դէմ մեղանչած չլինելու համար այս էլ պիտի ասենք, որ շնորհիւ մեր ձեռք առած մի քանի ճարպիկութիւնների երկու անգամ չարաչար կերպով վրայ ենք հասցրել, նրան տանը գտել և տունն օրհնել, որի համար մի ռուբլի պարտական ենք յետ տալ նրան յաւուրն դատաստանի։

Տունն օրհնելիս որքան աննախանձելի է այդպիսի անձերի դրութիւնը, կրկնապատիկն ու եռապատիկը մերն է, բայց ինչ կարող ենք անել։ Յովհաննէս Ոսկեբերան Հայրապետը նզովք է գրել այն քահանայի վրայ, որը բոլոր տներն անխտիր չի օրհնել։ Ո՞ւր է եթէ զարթնէր նա և «Նոր-Դար»-ի այս համարը կարդար։

ժէ) Այս տան տիրոջ աչքի լոյս միակ որդին վախճանուել է հեռու օտարութեան մէջ, երկու օր հազիւ կայ, որ հեռագիրը դուժել է չարաբաստիկ լուրը։ Խե՜ղճ ծնողներ. ձեզ համար սև նոր տարի է լուսացել։ Տնօրհնէք է. Ներս մտնենք ինչ ասենք՝ «Խորհուրդ մեծ և սքանչելի» թէ «Այսօր ցնծան երկինք ի վերուստ»... Այս մի քանի օրը հինգ անգամ ներս ենք գնացել, «Հոգւոց» տալ, մխիթարել. բայց նա ինչո՞վ կարող է մխիթարուել։ Փոքր ինչ մտածում ենք դրան առաջ կանգնած, ապա սիրտ առնում ներս մտնում, նորից հոգւոց ասում, նորից մխիթարում ու մորմոքուած սրտով դուրս գալիս հեռանում։

ժը) Այս տան հայրը տասն տարուան անդամալոյծ է՝ ութսունամեայ զառամեալ հասակի մէջ. որդիքը բոլորը մահացած են։ Մնում է երկրորդ կինը և դրանից ծնուած երկու աղջկերք՝ 17 և 19 ամեայ։ Աղքատութիւնը համարձակ տիրապետում է տան վրայ. հնամաշ իրեղէններն ու կարասիքը յիշեցնում են միայն դրանց փառաւոր անցեալը։

Ի՞նչ անի քահանան, որ ջուրն ընկնի. յիսուն կոպէկի, մի ռուբլու գործ է որ տայ ու անցնի։ Մտադրում ենք մի ճար փնտռել դրանց համար և խոր հո-

---

մենասարսափելի պատուհասներից մէկն էլ թոքախտն է, բարակացաւը, որի դէմ կռուելու համար մարդկութիւնը դեռ իրեն անզօր է համարում։ Սակայն միշտ փորձեր լինում են նորանոր միջոցներով դարմանելու համար այդ ցաւը։

Պարիզի պրոֆեսորներից հռչակաւոր Շարլ Ռիշէն և դոկտոր Հերիկուրն անցեալները մի շարք զեկուցումներ արին նախ Պարիզի բժշկական ճեմարանում, ապա և համաշխարհային ցուցահանդէսի բժշկական ու առողջապահական կոնգրեսներում, թէ այժմս արդէն գիտութիւնն անզօր չէ յիշեալ հիւանդութեան առաջ, և թոքախտը հիմնական կերպով բժշկւում է։ Նրանք իրենց փորձերն ընդարձակ չափով արել են Montingnies Saint-Christophe հիւանդանոցում և գեղեցիկ հետևանքների են հասել։

Ընթերցողներն արդէն ծանօթ են այդ փորձերին. ես իմ տեսութիւններիցս մէկի մէջ խօսել եմ դրա մասին—հում մսանիւթի մասին. այդ եղանակով թոքախտաւորները 100 ից 70—30 հոգի, նոյն իսկ աւելին բժշկւում են լիովին, իսկ մեռածների դիակներն էլ անդամահատելով տեսել են, որ դրանց մահուան պատճառը բոլորովին ուրիշ հիւանդութիւն է եղած։

Ես աւելորդ եմ համարում բժշկական այդ եղանակի մասին աւելի մանրամասն կերպով խօսել, միայն յիշեցնեմ, որ ներկայումս էլ թոքախտաւորներին բժշկելու ամենաէական պայմանն է կազմում լաւ սնունդը և մաքուր օդը։ Յիշեալ բժիշկներն իրենց խնամքին յանձնուած հիւանդներին տալիս են հում մսի մզած նիւթը, որը հակաթոյն է հանդիսանում բարակացաւի բացիլների համար, հաւանականօրէն նրանով, որ դա ինքն ըստ ինքեան խիստ սննդաւոր նիւթ է և կազդուրում է հիւանդին։

Սակայն որքան էլ որ այդ փորձերն աջող եղած լինին, այնուամենայնիւ դեռ ևս հարկաւոր է որ դրանք աւելի ընդարձակ ծաւալ ստանան և բազմաթիւ հիւանդների վրայ կատարուեն։ Բայց դրա համար հարկաւոր է բաւական խոշոր գումար։ Եւ ահա, շնորհիւ «Chronique de Bruxelles» լրագրի խմբագիր Կամիլլակուրին և Ժորժ Մարկէի, մի բուժարան է շինւում Էրքելինի ու Շարլուայի միջև, մի հրաշալի վայրում, Սամբր գետակի մօտ։ Գործին կառավարիչ է նշանակւում բելգիացի յայտնի բժիշկ Բերլիան։ Բուժարանում (սանատորիում) բժշկութիւնը ձրի է։ Խնդիր են տալիս մօտ 4000 հիւանդներ, բայց դրանցից ընդունւում են միայն 30 հոգի ամենաաղքատ և անյուսալի թոքախտաւորներ։ Այդտեղ գործ են դնում Ռիշէի և Հերիկուրի առաջարկած միջոցը—հում միսը—և զարմանալի արդիւնք են ստանում։ Բուժարանը բացուած էր մայիսին և հինգ ամսուայ ընթացքում հիւանդներից շատերը բոլորովին բժշկուած հեռացել են բուժարանից, իսկ մնացածների առողջութիւնն ակնյայտնի կերպով լաւացել է՝—ջերմը, հազը, տաքութիւնը բոլորովին հեռացած է, ախորժակները բացուել և մարմնի կշիռն աւելացել՝ իւրաքանչիւր ամիսը երկու կիլոգրամ։

Մի գաղափար կազմելու համար հիւանդների ստացած սնունդի մասին, այստեղ առաջ կբերեմ հիւանդների կերակրեղէնի ցուցակը.

Առաւօտեան.

Ժամը 7-ին՝—սուրճ, հաց, ձու.
» 9-ին՝—300 գրամմ հում միս.
» 11-ին՝—կաթ, ձու.
» 12-ին՝—ճաշ—ապուր (սուպ), կարտոֆ, կանաչեղէն, միս, գարեջուր։

Ճաշից յետոյ.

Ժամը 2 ին՝—300 գրամմ հում միս.
» 3-ին՝—կաթ, ձու.
» 4 ին՝—300 գրամմ հում միս.
» 6-ին՝—ձուաձեղ.
Ժամը 8 ին՝—տաքացրած կաթ.

Այդ ժամերից դուրս, մնացած ժամանակը իւրաքանչիւր հիւանդ 500 գրամմ մսի հիւթ է ստանում։

Պէտք է յուսալ, որ այս բուժարանի ցոյց տուած արդիւնքը խրախոյս կլինի ուրիշ տեղեր ևս նմանօրինակ բուժարաններ հիմնելու։ Եւ արդէն հոկտեմբերի 14 ին Ֆրանսիայի ամենագեղարուեստական վայրերից մէկում, Օժիկուրում բացուեց մի նոր սանատորիում (բուժարան), ուր մէջ կարող է 150 հոգի տեղաւորուել։

*

Ընթերցողներիս յայտնի է նոյնպէս, որ դանիական յայտնի պրոֆեսոր Ֆինզէնը իւր լուսաբուժական ինստիտուտում յաջողութեամբ բժշկում է գայլուկ (lupus) հիւանդութիւնը։ Բայց յայտնի չէր, որ այնտեղ փորձեր են լինում լոյսի միջոցով թոքախտն էլ բժշկելու։ Լոյսը, գլխաւորապէս լոյսի այն մասը, որի մէջ աւելի քիմիական ճառագայթներ են պարունակւում, սպանում է lupus-ի բացիլները։ Եւ որովհետև այդ հիւանդութիւնն աւելի մարմնի վրայ է լինում, ուստի և ենթարկւում է լոյսի ներգործութեան։ Այդ հիւանդութիւնը միևնոյն թոքախտի ծագումն ունի, ուստի և կարելի էր ենթադրել, որ թոքախտն էլ հնարաւոր կլինէր բժշկել, եթէ կարելի լինէր մարդու թոքերը ենթարկել լոյսի ներգործութեան։ Այժմ, ինչպէս տեղեկանում ենք, Ֆինզէնն աշխատում է հնարաւորութիւն գտնել լոյսի միջոցով բժշկել նաև թոքախտը։ Թէպէտ այդ փորձերի մասին դեռ ոչ մի տեղեկութիւն չկայ հրատարակուած, բայց արդէն լրագրների մէջ խօսում են, որ զարմանալի արդիւնք է ստացուած։ Թէպէտ դա անհնարին բան չէ տեսականապէս, բայց պէտք է սպասել աւելի ճիշտ տեղեկութիւնների։

Յիշեցնեմ, որ Ֆինզէնի ինստիտուտը շինուած է մեծ մասամբ հասարակութեան ձեռնտուութեամբ՝—մէկ միլիոն կրօն ժողովարարութեամբ է հաւաքուած, մէկ միլիոն նուիրել են յայտնի գարեջրի գործարանատէր Եակոբսէնները, իսկ կառավարութիւնն ու Կոպենհագէն քաղաքի վարչութիւնն ևս տալիս են տարեկան 100,000 կրօն։ Մինչև 1899 թ. վերջն այդ ինստիտուտում եղել է 462 գայլուկով հիւանդ, որից 311-ը բոլորովին բժշկուել է, 121 ը դեռ հիւանդանոցումն են և 30 հոգի կիսատ թողած հեռացել են հիւանդանոցից։

Հրաստ

---

*) Տես Նոր-Դար № 49

գոց քաշելով դուրս գնում ծանր տպաւորութեան տակ։

ժթ) Այս տան հայրը դեռ այրական հասակի մէջ կուրացել է այս տարի Մեր բոլոր խորհուրդներն ի զուր են անցել, բժշկական ոչ մի միջոց չի օգնում նրան։ Զարմանալի բան .. անցեալ տարուայ ուրախ ու զուարթ մարդն այսօր տխուր նստած է մահճակալի մէջ տեղը և համրիչի հետ է խաղում երեխայի նման։ Մտնում ենք, սկսում ենք «Խորհուրդ մեծ է». Նա մեզ հետ նոյնն է կրկնում։ Աւարտելուց յետոյ ուզում է մօտենալ, համբուրել աւետարանը, բայց չի կարողանում. մենք ենք մօտենում նրան։ Նոյն ծանր տպաւորութեան տակ հեռանում ենք և այդ տեղից։

ի, իա, իբ) և այլ տներից մէկում հանդիպում ենք այս տեսակ, միւսում այն տեսակ հիւանդների, որոնց ոչ մէկին չենք կարողանում օգնել, որովհետև բժիշկ չենք։ Մի քանի կարգադրութիւններ անելուց յետոյ խորհուրդ ենք տալիս բժիշկ հրաւիրել... Ո՞ր դրամից, ինչ միջոցներով—այդ մասին ոչինչ չենք ասում, որովհետև ինչ կարող ենք ասել, և տխուր թողնում հեռանում ենք։

—

Ահա սա է այն տխուր հանգամանքի նկարագիրը, որին հանդիպում ենք տարեկան երկու անգամ և որին չէինք ցանկանալ նորից պատահել, քանի որ դա կապուած կլինի նիւթականի գծուծ հաշիւների ու ստորացնող պայմանների հետ։

Այս դեռ փոքրիկ քաղաքի տնօրհնէքն է. ընթերցողը կըհաւատա՞յ արդեօք իր ականջներին, եթէ պատմենք գիւղերինը։ Այնտեղ քահանան գոնէ մի գաւազան, իսկ տիրացուն ու բեռնակիր մարդն առ սակաւը միմի մահակ պիտի ունենան ձեռքներին, պաշտպանուելու համար կատաղի շներից, որոնք աշխարհը մոռանում են մուրացկան տեսնելիս։ Այդ խումբը բացի այն, որ պիտի տանի հետը երկու տոպրակ ու մի կողով՝ լոբու, բրդի ու ձուի համար, ունենալու է նաև մատիտ ու մատեան ապառիկների ի զուր հաշիւը գրելու համար։ Ինչ վերաբերում է շինական ժողովրդի նիւթականին, արժէ միայն ասել, որ հազար րուբլին քիչ է եթէ քահանան վերցնի կորստեալներին բաժանելու համար։

Արդեօք դուրս կըգա՞յ մի զօրաւոր ձեռք, որ ղեւթական գաւազանի զօրութեամբ տնօրհնեաց սովորութիւնը ներկայից նորից փոխադրէր դէպի հին անցեալը՝ հեռացնելով նիւթականը և կապակցելով նրա հետ այն ամեն վսեմ, ազնիւ ու բարի նպատակները, որոնք դարերի ընթացքում անյայտացել են՝ թողնելով իրենց ողորմելի հետքերը միայն։

Զաքարիա քահ. Ալբեսեան

Ղազախ քաղաք

ԹՂԹԱԿՑՈՒԹԻՒՆՆԵՐ

ԳԱՆՁԱԿ, 20 մարտի.—Ամենքիս էլ յայտնի է, որ մեր հայերն առհասարակ այնպէս են վերաբերւում դէպի հայ թերթերը, ինչպէս Թուրքը խոզի մսին. իսկ եթէ դրանք ուզում են հայ լրագիր կարդալ, անշուշտ այդ էլ ուզում են ձրի անել։ Աշխարհումս ձրի բան ուտելուց էլ քաղցր ինչ կարող է լինել. այս ամենքիդ էլ յայտնի է։ Բայց որ ինտելիգենտ (աստիճանաւոր) մարդն այն աստիճան իրեն ստորացնի, որ հայ լրագիր կարդալու իր փոքր ախորժակը յագեցնի մի ողորմելի սափրիչի հաշուին, այն էլ երկար տարիների ընթացքում, այդ մենք չէինք էլ երեւակայիլ։ Սակայն ցաւով պիտի արձանագրեմ այս նշանաւոր փաստը, որը կարող է տեղի ունենալ միայն մեր ինքնասիրութիւնից զուրկ հայերի մէջ։

—Գիտէք, ընթերցող, այս մեծ պասն էլ է անցնելու վրայ, իսկ մեր եկեղեցիների ժամերգութիւնը մնում է անփոփոխ նոյն անտանելի դրութեան մէջ։ Ո՛ւմ գլխին վայ տանք.—Հոգևոր «գործունեայ» իշխանութեան, թէ մեր թմրած ժողովրդի. հազար տարի բղաւիր «յաւ ժամերգութիւն, ժամերգութիւն և ժամեր-գու-թիւն...», ո՛վ է լսողը։ Ի՞նչ կանենք մենք կանոնաւոր քաղցր ժամերգութիւնը. այն էլ բաւական է մեզ, որ լոբու ճաշի պէս իրար վրայ են տալիս ժամ ասելիս, ով ինչպէս ցանկանում է կամ տրամադրուած է։

—Վերջերս լուրեր են պտտւում, որ մեր սրբազան յաջորդը Ղամախու թեմի առաջնորդական փոխանորդ է նշանակւում, իսկ մեզ մօտ յաջորդ է գալիս նախկին յաջորդ վարդապետը։ Շատ լաւ է. ներկայ յաջորդը յաջորդարանի մի կողմի պատշգամբն է մաշել անգործութիւնից ման գալով, նախկինն կը գայ միւս կողմի պատշգամբը կը մաշէ։ Բաղտաւոր մարդիկ ենք. ինչ ասեմ. այն ժամանակ, երբ «Թիֆլիսի ճրագը կը մարի, մերը կը վառուի» ու երբ «Գանձակի ճրագը կը խաւարի, Ղամախուինը կը վառուի...»

—Ո՛վ է ասում, թէ մենք, այսինքն մեր քաղաքը չի առաջադիմում. մինչդեռ մենք քնած ենք ու ոչինչ չենք իմանում, լրագրները հաղորդում են, որ մեր քաղաքային վարչութիւնը մտադիր է ելեկտրական լուսաւորութիւն մտցնել մեր քաղաքում։ Չեմ իմանում՝ ինչն է դրդել մեր վարչութեանն այդ միտքը յղանալու. միայն սաստիկ վախենում եմ, որ ելեկտրական լամպերի վրայ փոշու այնքան հաստ շերտեր նստեն, որ ոչ թէ ելեկտրական, այլ ճրագուի մոմի լոյս անգամ չտեսնենք...։

—Մեր քաղաքային դպրոցից վերջերս էլի մի 60—70 աշակերտ են դուրս արել, ուսման վճարը չտալուն համար։ Մարդու սիրտ է ճմլւում, երբ տեսնում ես թշուառ երեխաներ ուսումից զրկուած թափառում են փողոցները, իրենց ծաղիկ հասակում արդէն կեանքի անողոք հարուածների հանդիպելով, երբ տեսնում ես կամ նրանց աւելի թշուառ ծնողներին արտասուքն աչքերին սրան-նրան դիմելիս «մի ճար անելու համար»։ Միթէ, յիրաւի, յաւիտեան պէտք է մենք այս աստիճան անզգայ գտնուինք դէպի մեր չունևորները, դէպի մանուկ սերնդի կրթութեան գործը։ Զարմանալին այն է, որ մեր քաղաքը մեծ ծախքեր է անում յիշեալ դպրոցը պահելու համար և չի կարողանում այնպէս անել, որ չքաւոր աշակերտներն ուսումը ձրի ստանան։ Ասում են (մի վստահ և գործին տեղեակ անձից եմ լսել), թէ այնքան աշակերտների արձակումը պատճառաբանւում է ոչ թէ միայն ուսման վարձը չտալով, այլ գլխաւորապէս այն պատճառով, որ դըպրոցում յիշեալ աշակերտների համար տեղ չկայ...

—Գանձակում գտնուող էջմիածնապատկան այգին կապալով տրւում է Ելենենդորֆ գաղութի մի գերմանացու երկար ժամանակամիջոցով և 700 րուբլի տարեկան վճարով. աչքներդ լոյս, հազիւ այս այգու համար էլ գարուն կըբացուի...։ Մինչև այժմ խեղճ այգին էր ամօթով թէ իր տուած քիչ արդիւնքի և թէ իր արտաքին տեսքի համար, իսկ այսուհետև յոյս կայ, որ ուրիշներն ամօթով մնան։

Arasindo

ՆԱՄԱԿ ԳԵՐՄԱՆԻԱՅԻՑ

(«Նոր-Դար»-ի Թղթակցութիւն)

ՄԱՐԲՈՒՐԳ, 22 մարտի (Ն. տ.). — Գերմանիայի քսաներկու համալսարանական քաղաքներից մէկն է Մարբուրգը (Հեսսենում) մօտ 18 հազար բնակչով։ Գերմանիայի գեղեցկադիր վայրերից մէկն է համարւում այս քաղաքը, որին երեք կողմով պատում է Լան գետակը։ Շուրջը տարածուած են մշտականաչ անտառներով ծածկուած սարեր, որոնք մի առանձին գեղեցկութիւն են տալիս քաղաքին հասարակութեան համար սիրուն զբօսավայրեր հանդիսանալով։

Սակայն Մարբուրգին աւելի գեղեցկութիւն և նշանակութիւն տուողն իր համալսարանն է, ժամանակով առաջինը բողոքական համալսարաններից, որը հիմնարկուել է 1527 թ. Փիլիպպոս Մեծահոգի լանդգրաֆի ձեռքով։ Համալսարանն այժմ ունի նոր շինութիւն, որից բաժան, ուրիշ շինութիւնների մէջ են տեղաւորուած նրա զանազան կլինիկները, ինստիտուտներն ու սեմինարիաները։ Բոլորովին նոր, մի հոյակապ շէնքի մէջ է տեղաւորուած համալսարանի մատենադարանը, ուր հարիւր հազարաւոր հատորների թւում կարելի է հանդիպել նաև Չամչեանի հարիւր և աւելի տարեկան «Հայոց պատմութեանը»։

Մարբուրգի համալսարանի ուսանողների թիւը միջին թւով մօտ 1200 ի է հասնում. համեմատաբար փոքր թիւ, գլխաւորապէս այն պատճառով, որ այստեղից միայն մի ժամ հեռու գտնուող Գիսէն քաղաքն էլ համալսարան ունի, ուրտեղացի երիտասարդներն ստիպուած չեն այս կամ ուրիշ՝ հեռու քաղաքներ երթալ բարձրագոյն ուսում ստանալու համար։

Բացի համալսարանից՝ Մարբուրգն ունի նաև հետևեալ կրթական հաստատութիւնները —գիմնազիոն՝ պրոգիմնազիոնով, ռէալական դպրոց, օրիորդաց բարձ. դպրոց, կարուձևի դպրոց, օրիորդաց և տղայոց ժողովրդական դպրոցներ, կաթոլիկների եկեղեցական՝ և հրէաների դպրոցներ։ Այս դպրոցներում են սովորում քաղաքի մանուկները, որոնց համար ուսումը, ինչպէս յայտնի է, պարտադիր է 6—14 տարեկան հասակը։ Աղքատ դասակարգի համար են կառուցուած ժողովրդական դպրոցները, որտեղ ուսումն անվճար է։

Մարբուրգում գոյութիւն ունին բարեգործական, կրօնական և այլ ընկերութիւններ, որոնք նմանապէս մեծ չափով, ի հարկէ, նպաստում են հասարակութեան առաջադիմութեանը գործով թէ խօսքով՝ յաճախակի կարդացուող ժողովրդական դասախօսութիւնների միջոցով։ Այդ ընկերութիւնների թւում չեմ հաշւում, ի հարկէ, այստեղի ուսանողական 20—22 միութիւնները, որոնք սակայն ամենից առաջ նպատակ ունին որքան կարելի է շատ կոնծել *), մի քանիսը դրա հետ նաև որքան կարելի է շատ մենամարտել գեղեցկանալու նպատակով։

Մարբուրգում հրատարակւում է երկու ամենօրեայ քաղաքական թերթ և մի կրօնական շաբաթաթերթ։ (Ի դէպս։ Այստեղ պիտի հրատարակուի նաև, պրոֆեսոր Ֆինկի խմբագրութեամբ, եւրոպական և հայ լեզուներով եռամսեայ մի հանդէս, զուտ հայագիտութեան նուիրուած, որի առաջին գիրքն արդէն մամուլի տակ է)։

Քաղաքի Museum ն ունի, թատրոնական դահլիճի և այլ յարմարութիւնների հետ, հասարակութեան ամեն դասակարգի համար գրադարան-ընթերցարան, որտեղ ստացւում են գերմանական ու արտասահմանի նշանաւոր լրագրներն ու հանդէսները։ Մի կողմը մնայ այն, որ քաղաքի իւրաքանչիւր ճաշարան կամ սրճարան (կաֆէ), կարելի է ասել, միմի ընթերցարան է, որտեղ ստացւում են մի քանի լրագրներ,—ուրեմն երբեմն աւելի՝ քան մեր մի քանի ընթերցարաններում։ Այն ես կայ, որ համարեա իւրաքանչիւր ընտանիք գոնէ մի լրագիր ստանալը ոչ թէ բարեգործութիւն է համարում, այլ պահանջ։

Մարբուրգի մտաւոր կեանքի վրայ մի կարճ հայեացք ձգեցի յատկապէս այն նպատակով, որ մեր հայրենակիցները գաղափար կազմեն, թէ ինչպէս է ապրում գերմ. մի գաւառական փոքրիկ քաղաք, համեմատեն մեր երկրի որևէ առաջնակարգ կամ գաւառական քաղաքի հետ։ Վերցնենք, օրինակ, Կովկասի Շուշին, որին Ղարաբաղի մայրաքաղաք անունն են տալիս. այն էլ գաւառական քաղաք է, միայն աւելի մեծ քան Մարբուրգը. հետևենք նրա մտաւոր կեանքին.—բայց ի՞նչ. չէ՞ որ ամենքիս էլ յայտնի է, որ նա միայն երկրորդ դպրոցական հաստատութիւններ ունի։ Գալով մամուլին, Շուշում հրատարակուող ամենօրեայ լրագրներին՝ աչքերդ էլ պիտի փակես և յիշես, որ շուշեցիներն այնքան առաջադէմ են, որ չկարողացան իրենց մէջ պահել թէկուզ տարեկան երկու անգամ հրատարակուող մի հանդէս։ Սակայն իրենց լինի լրագրներ հրատարակելը. քանի՜ հոգի են ստանում լրագիր. ի հարկէ շատ քչերը։ Եւ այս այսպէս էլ կըմնայ, մինչև որ կարդալը մեզնում էլ ներքին պահանջ չդառնայ. իսկ գերմանացու համար, կին թէ տղամարդ, կարդալը պահանջ է։ Այն ընտանիքը, օրինակ, որտեղ ես ապրում եմ, բաղկացած է միմիայն երկու անդամից, ունի միանգամայն համեստ ապրուստ. այդ ընտանիքն ստանում է մի ամենօրեայ թերթ. բացի դրանից՝ ուրիշների ընկերակցութեամբ, մի քանի այլ և այլ շաբաթաթերթեր. և այս՝ միմիայն երկու անդամից բաղկացած ընտանիքը. 60—65 տարեկան գերմ. պառաւ կնոջ համար, հասարակ կրթութիւն ստացած, գրական կամ քաղաքական խնդիրները կենդանի հետաքրքրութիւն են ներկայացնում, այն ինչ մեզ մօտ նոյն իսկ կրթութիւն ստացած կամ կրթուող երիտասարդը, որը միշտ առաջադիմութեան և գիտութեան վերջին խօսքով կխօսէ առաջ, իւր մայրենի լեզուով գոնէ ուղիղ գրել (երբեմն նոյն իսկ անուն ազգանունը) չգիտնալը, իւր երկրի պատմութիւնն ու աշխարհագրութիւնը չիմանալը ոչինչ, անկարևոր բան է համարում։ Նոյնը և մեր առաջադիմող օրիորդը։ Իսկ գոնէ ձգտում իւր կրթութեան մէջ այս կամ այն պատճառով թերի մնացած կարևորը լրացնելու՝—ամենևին։ Իսկ եթէ այդպիսի բարի կամք զարթնի, կամ աւելի ճիշտ՝ զարթեցնուի նրա մէջ՝ այդ էլ կլինի մի երկու օրով, մոդին հետևելով, ուրիշներից յետ չմնալու համար։

Բայց թողնենք գաւառացի երիտասարդին ու օրիորդին. բարձրանանք վերև, համալսարանական կրթութիւն ստացող հայ երիտասարդների մօտ. կըտեսնենք, ցաւօք՝ որ նրանք էլ, չնչին բացառութեամբ, կրթութեան նոյն թերի կողմերն ունին, ինչ որ գաւառում աշակերտական նստարանի վրայ սովորող պատանին։ Եւ այդ թերի կողմերն էլ մնում են ու մնում։ Եւ այդպիսիները կազմում են մեր առաջաւոր դասը, մեր ինտելիգենցիան, մեր պարծանքը. և եթէ հայ ազգը մի օր աշխարհի առաջ հանէ իր այդ պարծանքը, նա անուանը պիտի խիստ կարմրէ...

Մարբուրգի, յիշատակելու արժանի, հասարակական շէնքերից են.—Ս. Եղիսաբէթի եկեղեցին, հիմնարկուած 1235 թուին. Նրա բարձրութիւնն է 75 մետր։

Ս. Յակոբի հիւանդանոցը, որտեղ ռեֆորմացիոնից առաջ օթևան էին գտնում չունևոր օտարականները. 1530 թուից սկսած այդ հաստատութիւնը դարձաւ քաղաքի հիւանդների ապաստանարան։ Իսկ այժմ այդ շէնքում են ապրում նաև գթութեան քոյրեր, որոնց հոգատարութեանն են յանձնուած թէ այդ հիւանդանոցի և թէ քաղաքի այլ հիւանդներ։

Բայց Մարբուրգի շէնքերի մէջ ամենից աչքի ընկնողը, իր գեղեցիկ դիրքով, նրա բերդն է մի բարձրութեան վրայ, որտեղից հորիզոնը դէպի շրջակայքն ընդարձակ է և տեսարանը՝ հրաշալի։ Գերմանիայի հին և նոր գեղեցիկ բերդերից մէկն է համարւում այն։ Նրա մէջ են պահպանւում մինչև օրս էլ բազմաթեսակ գրչագրեր, արձանագրութիւններ և այլ հնութիւններ։

Իր նշանակութեամբ յիշատակելի է նաև Մարբուրգի պժանոցը (Jrrenheilanstaet), որը շինուած է քաղաքից դուրս, մի ընդարձակ տարածութեան վրայ՝ անտառին կից։ Այդտեղ են ապաստանւում Կասէլի նահանգի բնակիչների մէջ եղող բուժելի կամ անբուժելի հոգեկան հիւանդները։ Այդպիսի հիմնարկութիւնները կառուցւում են Գերմանիայում ընդհանրապէս այնպիսի վայրերում, որտեղ օդը միանգամայն առողջարար է, որտեղ բնական աւելի յարմարութիւններ կան՝ հիւանդութիւնների բուժման նպաստիչ։ Մարբուրգի շրջակայքում եղած վայրերից յիշատակութեան արժանի են նաև կայսր Վիլհելմ I ի աշտարակը և Ֆրաուենբերգը։ Առաջինը գտնւում է քաղաքից դէպի արևելք գտնուող սարի վրայ, շրջապատուած գեղեցիկ անտառով։ Այդ աշտարակը շինուած է ի յիշատակ 1870/71 թ. ֆրանս-պրուսական պատերազմի, որտեղ ընկել են նաև Մարբուրգի ուսանողներից ոմանք, որոնց անուններն արձանագրուած են այնտեղ։

Քաղաքից մօտ 1½ ժամ դէպի հարաւ է գտնւում Ֆրաուենբերգ աւերակը, սարի գագաթին, որը 1252 թուին հերցոգուհի Սոֆի Բրաբանտի ձեռքով շինուած դղեակի մնացորդն է. սակայն հին դղեակից այժմ համարեա ոչինչ չէ մնացել, միայն մի երկու պատ, այն էլ վերջերը նորոգուած։

Ար. Աբեղեան

---

*) Այդ կոնծողներից են առաջ եկել Գերմանիայի երևելի մարդիկը։ Գերմանացի ուսանողը կարող է գիշերը կոնծել, իսկ առաւօտը կանուխ իր գործին գնալ, պարապել, այն ինչ՝ հայ ուսանողն երբ կոնծել սկսեց, նա բան չինել, պարապել չի կարող։ Խմբ.

ՔԱՂԱՔԱԿԱՆ

ԱՆԳԼԻԱ

Այս օրերս Լոնդոնում «Hotel Cecil» ի մէջ մի բանկետ տեղի ունեցաւ, որ կազմակերպել էր ազատամիտ իմպերիալիստների կուսակցութիւնը։ Գլխաւոր ճառախօսն էր յայտնի ազատամիտ գործիչ Էդուարդ Գրէյ։ Նրա ճառը նուիրուած էր գլխաւորապէս հարաւ աֆրիկեան պատերազմին։ «Հէնց սկզբից,—ասաց նա,—բոլորովին պարզ էր, թէ ով է մեղաւորն այս պատերազմի մէջ, և պարզ է, որ բուրերի հասարակապետութիւնը պէտք է միացնել բրիտանական հողերի հետ։ Ներկայումս պատերազմը մօտենում է իր վախճանին, և գալիս է ժամանակը Տրանսվաալի և Օրանժի հասարակապետութեան ապագայ կազմակերպութեան խնդիրը քննելու։ Այս առթիւ մի առաջարկութիւն արդէն արեց կառավարութիւնը։ Ես կողմնակից չեմ այն մարդկանց, որոնք բուրերին խոստանում են վարչութիւն տալ կայսերական գաղութների հիմունքներով, բայց կարծում եմ, որ Անգլիայի առաջարկած պայմանները խիստ նպաստաւոր են բուրերի համար։ Ես չեմ կարծում, թէ նրանց կարելի լինի առաջարկել աւելի քան այն, ինչ որ առաջարկել է Կիտչեները Բոթային, և չեմ հասկանում ինչու բուրերը մերժել են այդ պայմանները։ Պէտք է կարծել, թէ նրանք դեռ ևս յոյս ունին, որ Եւրոպան կըմիջամտի իրենց օգտին, բայց նրանք, որոնք վառ են պահում նրանց մէջ այդ անհիմն յոյսը, ծանր պատասխանատւութիւն են առնում իրենց վրայ։ Յամենայն դէպս բուրերի անկախութեան խնդիրը պիտի ջնջուի (Ծափեր)։ Ինչ վերաբերում է բուրերի կողմը կռուող բրիտանական հպատակներին պատժելու խնդրին, ի հարկէ կարելի չէ նրանց կատարելապէս ներել, բայց պատիժը պէտք է մեղմ լինի»։

—Հարաւային Աֆրիկայում անգլիացիների ունեցած հաշտութեան բանակցութիւնների անաջողութիւնը գերմանական թերթերին առիթ է տալիս նորից խօսելու այն դժուարութիւնների մասին, որոնց մէջ պիտի ընկնի Անգլիան։ Այն հանգամանքը, որ Բոթան ընդհատել է հաշտութեան բանակցութիւնները, շատ լրագրներ նշան են համարում այն բանի, որ բուրերը համոզուած են, թէ վաղ կամ ուշ իրենց կաջողուի անգլիացիներին ստիպել զիջելու և անկախութիւն տալու իրենց։ Մի քանի թղթակիցների ասելով, բոէրները հաւատում են իրենց հրմտութեանը և մտադիր են առաջուայ պէս դիմադրել աննկուն։

—

ԹՈՒՐՔԻԱ

Լրագրները հաղորդում են, որ ռուսաց դեսպան պ. Զինովիևը Թուրք կառավարութեանը մի յայտագիր է ներկայացրել, որով պահանջում է վճարել Ռուսիային հասանելիք թրքական 50,000 ոսկի վերջին ռուս-թրքական պատերազմի տուգանքի հաշուին։ Դրանից առաջ պ. Զինովիևը նոյն տուգանքի հաշուին պահանջել էր դարձել 43,000 ոսկի, այնպէս որ Դուռը հարկադրուած է այժմ Ռուսիային վճարելու 93,000 ոսկի։ Սակայն թրքական գանձարանն այնպիսի ողորմելի վիճակի մէջ է, որ կառավարութիւնը, լրագրների ասելով, չափազանց պիտի դժուարանայ Ռուսիայի պահանջը կատարելու։

—«National Zeit.»-ի Կ. Պոլսի թղթակցի ասելով, Մեքքա մեկնած սրբազան քարվանների մասին ոչ մի տեղեկութիւն չի ստացւում։ Թրքական մայրաքաղաքում երկիւղ են կրում, որ թշնամի ցեղերը երևի կոտորել են հետագրթելերը և քարավաններն ընկել են նրանց ձեռքը։ Մտահոգութիւն է պատճառում նաև գերմանական ինժեներ Մայսների վիճակը, որը երկաթուղու ճանապարհներ որոշելու համար իւր խըմբով մեկնել էր դէպի Արաբիա։ Մինչև անգամ կարծւում է, որ նա գերի է ընկել։

ՀԵՌԱԳՐԱԿԱՆ ԼՈՒՐԵՐ

—

Ձմեռը մօտենալու պատճառով բոէրներն ընդհանուր առմամբ շարժւում են դէպի Բուշֆելդ, բայց երկաթուղու երկու կողմն էլ թափառական զօրախմբերը մնում են։

—Պրետորիայի շուրջը բոէրների փոքրիկ զօրախմբեր են թափառում, քշում տանում են մոլորուած անասունները և փորձում են խորտակել երկաթուղու գնացքները։

—Պրետորիայից հեռագրում են, որ անգլիացիները գրաւել են Վարմբադը, աննշան դիմադրութեան հանդիպելով բոէրների կողմից։

—Կիտչեները հաղորդում է. «Պլումերը գրաւեց Նիլստրոմը, իսկ Փրենչն աւար վերցրեց Պոնգոլի ստորին հոսանքի վրայ մի 15-ֆունտանոց և մի արագաձիգ թնդանօթ։ Օրանժի գաղութում գերի են բռնուած 31 հոգի, առանց անգլիացիների կողմից կորուստ լինելու։

—Անգլիական պատգամաւորների ժողովում մարտի 21-ին, նիստը մինչև ապրիլի 5-ը յետաձգելու առաջարկը քննելիս, Բրոդրիկը պատասխանեց զանազան առարկութիւնների, որ եղել էին հարաւ-աֆրիկեան հասարակապետութիւններին առաջարկուած հաշտութեան պայմանների դէմ։ «Կառավարութիւնը,—ասաց Բրոդրիկը,—կամենում է բոէրների պարագլուխներին հնարաւորութիւն տալ նորից բանակցելու, եթէ այդ կամենում են նրանք, բայց միևնոյն ժամանակ նա կամենում է պարզել, որ պատերազմը կըտանի մինչև վերջը իւր ձեռքին եղած բոլոր միջոցներով»։ Ի վերջոյ Բրոդրիկն ասաց, թէ ինքը կարող է միայն յուսալ, որ պատերազմը շուտով և պատուաւոր կերպով կըվերջանայ։

—Բելգրադից հաղորդում են, որ Եօվանովիչի մինիստրութիւնը հրաժարական է տուել. Թագաւորն ընդունել է հրաժարականը և նոր մինիստրութիւն կազմելու գործը յանձնել է արտաքին գործերի մինիստր Վուիչին։

—Իտալական մինիստր նախագահ Ցանարդելին ժամանեց Վերոնա և սպասում էր Բիւլովի գալուն. Բիւլովը ժամանեց մի քիչ յետոյ։ Ցանարդելին մտաւ գերմանական պետական կանցլերի սալոնվագոնը, որտեղ նրանց միջև տեղի ունեցաւ մի երկարատև զրուցատրութիւն. Սրտագին հրաժեշտի ողջոյնից յետոյ Ցանարդելին մեկնեց Մարդերնո, իսկ Բիւլովը—Վենետիկ։

—Բոէրները Նեւկեսալի մօտ վերցրին երկաթուղու մի գնացք և նահանջ տուին դէպի լեռները, երբ երևացին Կեմպբելի ոյժերը։

Խմբագիր հրատարակիչ՝
ՍՊԱՆԴԱՐ ՍՊԱՆԴԱՐԵԱՆ

ՊԵՏԵՐԲՈՒՐԳԻ ԲՈՐՍԱՆ

Պետերբուրգ, 20 մարտի

—

Վեքսէլի կուրսը երեք ամսով		
Լոնդոնի վրայ 10 ֆունտ ստեր. համար	93,70	
Բեռլինի վրայ 100 մարկի համար.	45,85	
Պարիզի „ 100 ֆրանկի „	37,30	
Վեքսէլի կուրսը չէքերով.		
Լոնդոնի վրայ	94,65,	
Բեռլինի „	46,30	
Պարիզի „	37,60	
Բօրսային դիսկոնտը	5½—7½%	
4% պետական ռենտ.	96	առկ.
4% ներքին 2, 3, 4 փոխառ. 1891 թ.	—	
4½% ներքին 2, 3, 4 փոխառ. 1893 թ.	100 5/8	ծախ.
4½ ազն. կալ. բանկի գրաւաթղ.	96	առկ.
5% առաջին ներքին խաղարկ. փոխառութ. 1864 թ.	344	առկ.
5% երկրորդ ներքին խաղարկ. փոխառութ. 1866 թ.	285	առկ.
5% ազն. կալ. բանկի խաղարկ. գրաւաթղթերը.	220	առկ.
3½% պետ. ազն. կալ. բանկի գրաւթ.	89 1/8	գն.
5% ոսկու ռենտը 1884 թ.	—	
Թիֆլիսի քաղ. վարկի ընկ.	95½	
Օբլիգացիաները	95	ծախ.
Թիֆլիսի կալ. բանկի 5% գրաւ.	93½	ծախ.
Քութայիսի „ „ 6% „	—	ծախ.
„ „ „ 5% „	93	գն.

Բօրսայի տրամադրութիւնը թոյլ է, վերջը—լաւ։

ՏԵՂԵԿԱՏՈՒ

—

ԱՆԴՐԿՈՎԿԱՍԵԱՆ ԵՐԿԱԹՈՒՂԻ

[Ժամերը նշանակում են Պետերբուրգի ժամանակը, փակագծերի մէջ—Թիֆլիսի ժամանակը)

—

Արագընթաց գնացքը № 2 Թիֆլիսից Բագու մեկնում է (շաբաթը մի անգամ, չորեքշաբթի օրերը) 7 ժ. 56 ր. (8 ժ. 54 ր.) առ., հասնում է Բագու 9 ժ. (9 ժ. 58 ր.) երեկոյեան։

Արագընթաց գնացքը № 1 Բագուից Թիֆլիս մեկնում է 6 ժ 50 ր. (7 ժ. 48 ր.) առ., Թիֆլիս հասնում է 8 ժ. 12 ր. (9 ժ. 10 ր.) երեկոյեան։

Պօստային գնացքը № 3 Բագուից Թիֆլիս մեկնում է 11 ժ. 15 ր. 12 ժ. 13 ր.) երեկոյեան, Թիֆլիս հասնում է 5 ժ. 35 ր. (6 ժ. 33 ր.) ցերեկուայ. Թիֆլիսից Բաթում մեկնում է 6 ժ. 30 ր. (7 ժ. 28 ր.) երեկոյեան, Բաթում հասնում է 7 ժ. 10 ր. (8 ժ. 08 ր.) առ.։

Մարդատար գնացքը № 5 Բագուից Թիֆլիս մեկնում է 3 ժ. 5 ր. (4 ժ. 3 ր.) ցերեկուայ, Թիֆլիս հասնում է 8 ժ. 23 ր. (9 ժ. 21 ր.) առ., Թիֆլիսից Բաթում մեկնում է 9 ժ. 3 ր. (10 ժ. 1 ր.) առ., Բաթում հասնումէ 9 ժ. 11 ր. (10 ժ. 9 ր.) երեկոյեան

Մարդատար գնացքը № 6 Բաթումից Թիֆլիս մեկնում է 8 ժ. 56 ր. (9 ժ. 54 ր.) առ., Թիֆլիս հասնում 8 ժ. 42 ր. (9 ժ. 40 ր.) երեկոյեան։

Թիֆլիսից Բագու մեկնում է 9 ժ. 22 ր. (10 ժ. 20 ր.) երեկոյեան, Բագու հասնում է 1 ժ. 25 ր. (2 ժ. 23 ր.) ցերեկուայ։

Պօստային գնացքը № 4 Բաթումից Թիֆլիս մեկնում է 10 ժ. 4) ր. (11 ժ. 45 ր.) երեկոյեան, Թիֆլիս հասնում է 11 ժ. 18 ր. (12 ժ. 16 ր.) առ., Թիֆլիսից Բագու մեկնում է 12 ժ. 36 ր. (1 ժ. 34 ր.) ցերեկուայ, Բագու հասնում է 7 ժ. (7 ժ 58 ր.) առ.։

Թիֆլիսից Կարս մեկնում է 10 ժ. (10 ժ. 58 ր.) երեկոյեան, հասնում է Ղարաքիլիսա—5 ժ. 4 ր. (6 ժ. 2 ր.) առ., Ալէքսանդրապոլ—8 ժ. 27 ր. (9 ժ. 25 ր.) առ., Կարս—12 ժ. 23 ր. (1 ժ 21 ր.) ցերեկուայ։

Կարսից մեկնում է 4 ժ. 12 ր. 6 ժ. 10 ր.) ցերեկուայ, հասնում է Ալէքսանդրապոլ—7 ժ. 40 ր. (8 ժ. 38 ր.) երեկոյեան, Ղարաքիլիսա—11 ժ. (11 ժ. 58 ր.) գիշերուայ, Թիֆլիս—5 ժ. 15 ր. (7 ժ. 13 ր.)։

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

Լոյս տեսաւ
Դր. Վ. ԹՈՏՈՄԵԱՆՑԻ և Ե. ԹՈՓՉԵԱՆԻ
«DIE SOZIAL-ÖKONOMISCHE TÜRKEI»
աշխատութիւնը
ԳԻՆԸ 2 ՄԱՐԿ
Դիմել՝— Berlin, VerlagshandlungR. Prager NW. 7. 5—5



МЫЛО БѢЛАЯ СИРЕНЬ
МЫЛО ВІОЛА ВІОЛЕТТА
МЫЛО РОЗА РОЗИТА
№ 4711
МЫЛО ОРИВІОЛА
МЫЛО „LA BARONESSE"
МЫЛО „LILY OF THE VALLEY"
ПРІОБРѢЛИ БЛАГОДАРЯ СВОЕМУ ВЫДАЮЩЕМУСЯ КАЧЕСТВУ И ЧУДНОМУ ЗАПАХУ БОЛЬШУЮ ПОПУЛЯРНОСТЬ СРЕДИ ПУБЛИКИ.
М.) № 4 28

«ՆԱՏՈՒՐԵԼ»
Տուփի գինը 1 ր. 50 կ.
Նոյնը. Ռուսիա ուղարկելու համար 2 ր.։


КРАСКА
ДЛЯ
ВОЛОСЪ
ГОЛЛЕНДЕРА
ДЛЯ ОКРАСКИ ВОЛОСЪ ВЪ ЦВѢТА ЧЕРНЫЙ КАШТАНОВЫЙ И ТЕМНОРУСЫЙ ЛЕГКІЙ СПОСОБЪ И СКОРОЕ ОКРАШИВАНІЕ ВОЛОСЪ

ՆԱՏՈՒՐԵԼ ՆԵՐԿԸ
մազերը ներկող ամենաապահով և դիմացկուն դեղն է.
Ներկում է բնական սև, շագանակագոյն և մուգ-շիկագոյն։
Վատ ազդեցութիւն չունի մազերի վրայ։
Պահանջել Ռուսիայի բոլոր դեղատներում և պարֆիւմերիաների խանութներում։
Գլխաւոր պահեստ՝ հնարողի մօտ. Торг.-домъ ПАРФЮМЕРНАЯ ЛАБОРАТОРІЯ
„I. ГОЛЛЕНДЕРЪ"
С.-Петербургъ, Разъѣзжая, 13.
(М.) № 9519 4 3

ՄԱԶԵՐԻ ՆԵՐԿ
ՊՐԻՄԱ ԻՆԴԻԱՆ
ՊԵՏԵՐԲՈՒՐԳԻ
ՏԵԽՆՕ-քիմիական լաբորատորիայի
Արագ, ամուր և բնական ներկում է մազերը սև, մուգ խարտեաշ և խարտեաշ գոյներով
Գլխաւոր պահեստը
С.-Петербургъ, Коломенская, д. №12
Վաճառւում է ամեն տեղ
(М) № 52518. 12—6

ԹԻՖԼԻՍԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՎԱՐՉՈՒԹԻՒՆԸ
այսու ծանուցանում է, որ իւր ատեանում ներկայ տարուայ մարտի 23-ին, օրուայ ժամը 1-ին, աճրդով տրւում է շինելու Բեգոնից կոյուղու խողովակներ Գոգոլեան փողոցով Տրուխաչևի տընից մինչև Ոկզալեան փողոցում գոյութիւն ունեցող կոյուղին Թիֆլիս քաղաքի 10-րդ քաղաքամասում 89,00 սաժէն երկարութեամբ, 1200 րուբլի գումարով։ Աճուրդին մասնակցել ցանկացողները կարող են պայմանների հետ ծանօթանալ Վարչութեան շինարարական բաժանմունքում գործի ամեն օրերում առաւօտեան ժամը 9-ից մինչև օրուայ ժամը 3-ը։
(582) 3—3

ՄՕՏ ՕՐԵՐՈՒՄ ԼՈՅՍ Է ՏԵՍՆԵԼՈՒ
ՓԱՐՐԱՐԻ ՔԵՐԱԶՆԵՐ
ԳԻՆՆ Է 1 ՐՈՒԲԼԻ
Քահանաները և իմ նախկին աշակերտները կարող են ամենայն սիրով ձրի ստանալ օրինակները, ուղարկելով միայն պօստի ծախք (10 կոպ.)։
Գրավաճառները կըստանան 40% զիջում, եթէ կանխաւ վճարեն գինը և առնուազն 10 օրինակ պատուիրեն։
Հասցէս.— Св. Эчміадзинъ. Типографическому Комитету; Съ передачею С.М. Սեդրակ Մանդինեան
(576) 3—3

Лучшія аттестаціи отъ учебнаго начальства.
За успѣшныя занятія благодарности
И. Я. БРОНЪ-ФОНЪ-БРЕННЕРЪ
преподаетъ
Полный курсъ БУХГ ЛТЕРІИ
ПРЕДМЕТЫ ЗАНЯТІЙ:
1) Бухгалтерія (двойная италіянская), 2) Коммерческая ариѳметика 3) Коммерческая экономія. 4) Ариѳметика на счетахъ, 4) Торговыя и вексельныя узаконенія и 5) Коммерческая корреспонденція.
Курсъ 3-хъ-мѣсячный. Занятія ежедневныя. Плата за курсъ 60 руб. Ручательство и гарантія за успѣхи. Болѣе 1000 окончившихъ курсъ.
Михайловская № 71.
Собственный методъ преподаванія по собственнымъ сочиненіямъ, продающимся во всѣхъ книжныхъ магазинахъ.
Занятія съ 1-го числа
Преподов. ведется по совѣтъ. сочиненіямъ
480) Годъ занятій одиннадцатый 100—33

ՍԱՆԱՏՈԳԵՆ
ԱՄՐԱՊՆԴՈՂ ԴԵՂ,
ՈՐ ԲԺԻՇԿՆԵՐԸ ՋԵՐՄԱԳԻՆՍ ԱՌԱՋԱՐԿՈՒՄ ԵՆ
Գործածել իբրև սննդարար միջոց ստամոքսի և աղիքների ցաւի ժամանակ, երեխանց սննդառութեան խանգարման ժամանակ, ուժասպառ անող հիւանդութիւններից առողջանալիս, և իբրև սնունդը սաստկացնող միջոց ծծտուող մայրերի համար։ Այս բանը
ՓԱՌԱՒՈՐԱՊԷՍ
հաստատել են գիտնական մանրամասն հետազօտութիւններով պրոֆ. v. BERGMANN, EULENBURG, TOBOLD Բեռլինի համալսարանի կլինիկներում, պրոֆ. v SCHRÖTTER Վիեննայի համալսարանի Ներքին հիւանդութիւնների կլինիկի III բաժանմունքում, պրոֆ. v. FRÜHWALD Վիեննայի մօտ գտնուած երեխանց բուժարանում և այլն և այլն։
Պատրաստում է BAUER & Cie ֆիրման, Բեռլին, O. S. 16.
Վաճառւում է դեղատներում, դեղատնային խանութներում և դրօգիստների մօտ։
Փիրմայի գլխաւոր ներկայացուցիչների հասցէները
МОСКВА, А. ЮРКОВСКІЙ, Варварка, д. Т-ва Викулы Морозова
С. ПЕТЕРБУРГЪ, Э. ГРУБЕ, насл. В. О. Воиховскій пер. д. 5.
Իսկականը պարունակւում է միմիայն ռուսական ինքնուրոյն փաթեթի մէջ !!!
(М) 28918. 3—3

ПРЕДОСТЕРЕЖЕНІЕ
Въ виду появившихся за послѣднее время многочислен. поддѣлокъ и подражаній нашего
СЕКРЕТЪ КРАСОТЫ
ГЛИЦЕРО-ВАЗЕЛИНОВАГО МЫЛА „Молодости"
покорнѣйше просимъ публику обращать вниманіе на № 1017 разрѣшенія врачебнаго управленія и на фирму „А. Сіу и К°"!
ЭТИКЕТЪ УТВЕРЖДЕНЪ ДЕПАРТАМЕНТОМЪ ТОРГОВЛИ и МАНУФАКТ.
ПОДДѢЛКИ БУДУТЪ ПРЕСЛѢДОВАТЬСЯ ЗАКОНОМЪ.
А. СІУ и К°
М 168326 6—6

Доз. цензурою Тифлисъ, Марта 22-го дня 1901 г. Տպարան Ա. Ի. Պետրովի Типографія А. И. Петрова, Голов. пр., № 12 Телефонъ 387